ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

29 նոյեմբերի 2013 թվականի N 583-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի <<զ>> կետի, <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի և ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013 թվականի հունիսի 27-ի № 275-Ա որոշման № 3 հավելվածի 6-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների՝ **որոշում եմ.**

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության տարահանման պլանը համաձայն № 1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության տարահանման պլանի կատարումն ապահովվող փաստաթղթերը համաձայն №№ 2 – 14 հավելվածների:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ Ա.Ղազարյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ